Գիտություն

ԴԵԿՏՄԲԵՐ
№ 12
(229)
2010 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ



Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, համաձայն ՀՀ ԳԱԱ անդամների ընտրության ընթացակարգի, հրապարակում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրություններին առաջադրված թեկնածուների ցուցակը ըստ մասնագիտությունների

Ակադեմիկոսի թեկնածուներ

Մաթեմատիկա

Գևորգյան Գեղամ Գրիգորի՝ ֆիզ.մաթ.գիտությունների դոկտոր (ֆ.մ.գ.դ.) թղթ.անդամ

Քիմիա

Նորավյան Ազատ Սողոմոնի՝ քիմիական գիտ.դոկտոր (ք.գ.դ.) թղթ.անդամ
Շահինյան Արամ Արտաշեսի՝ ք.գ.դ.և ֆ.մ.գ.դ., թղթ. անդամ

Կենսատեխնոլոգիա

Սաղյան Աշոտ Սերոբի՝ ք.գ.դ., թղթ. անդամ
Մայրապետյան Ստեփան Խաչատուրի՝ գյուղատնտ.գիտ.դոկտոր, թղթակից անդամ

Պատմություն

Հարությունյան Բաբկեն Հարությունի՝ պատմ.գիտ.դոկտոր, (պ.գ.դ), թղթ. անդամ
Հովհաննիսյան Նիկոլայ Հովհաննեսի՝ պ.գ.դ., թղթ. անդամ
Սիմոնյան Արամ Հրաչիկի՝ պ.գ.դ., թղթ. անդամ
Ղազախեցյան Վլադիմիր Նահապետի՝ պ.գ.դ.

Իրավագիտություն

Ղազինյան Գագիկ Սերգեյի՝ իրավաբանական գիտ.դոկտոր, թղթ. անդամ

Տնտեսագիտություն

Սուվարյան Յուրի Միքայելի՝ տնտեսագիտության դոկտոր, թղթ. անդամ

Թղթակից անդամի թեկնածուներ

Մեխանիկա

Մխիթարյան Սուրեն Մանուկի՝ ֆ.մ.գ.դ.
Գրիգորյան Էդվարդ Խոսրովի՝ ֆ.մ.գ.դ.
Ղուկասյան Արտուշ Ապրեսի՝ ֆ.մ.գ.դ.
Բարսեղյան Վանյա Ռաֆայելի՝ ֆ.մ.գ.դ.
Պետրոսյան Գևորգ Լյուդվիկի՝ տեխնիկական գիտությունների դոկտոր, (տ.գ.դ),
Դանոյան Զավեն Ներսեսի՝ ֆ.մ.գ.դ.

Ինֆորմատիկա

Մարանջյան Հրանտ Բաբկենի՝ ֆ.մ.գ.դ.
Մարկոսյան Միհեր Վարդգեսի՝ տ.գ.դ.
Սարգսյան Արկադյա Երեմի՝ տ.գ.դ.

Էներգետիկա

Մարուխյան Ոստանիկ Զավենի՝ տեխն.գիտ.թեկնածու
Մելիքյան Զոհրաբ Աշոտի՝ տեխն.գ.դ.

Աստղաֆիզիկա

Աբրահամյան Մարտին Գրիգորի՝ ֆ.մ.գ.դ.
Սահարյան Արամ Ազատի՝ ֆ.մ.գ.դ.
Ղազարյան Միշա Արիստակեսի՝ ֆ.մ.գ.դ.
Վարդանյան Յուրի Լազերի՝ ֆ.մ.գ.դ.
Նիկողոսյան Արթուր Գարեգինի՝ ֆ.մ.գ.դ.

Լազերային ֆիզիկա

Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի՝ ֆ.մ.գ.դ.
Մելիքյան Արմեն Հովիկի՝ ֆ.մ.գ.դ.
Պապոյան Արամ Վարդգեսի՝ ֆ.մ.գ.դ.

Կոնդենսացված միջավայրի ֆիզիկա

Պետրոսյան Ստեփան Գրիգորի՝ ֆ.մ.գ.դ.
Խաչատրյան Աշոտ Ժուլվերնի՝ ֆ.մ.գ.դ.
Երիցյան Հոմերոս Սուրենի՝ ֆ.մ.գ.դ.
Մկրտչյան Արտակ Հենրիկի՝ ֆ.մ.գ.դ.

Պլազմայի ֆիզիկա

Մաթևոսյան Հրանտ Հենրիկի՝ ֆ.մ.գ.դ.
Մալխասյան Ռազմիկ Տաճատի՝ ֆ.մ.գ.դ.

Ֆիզիկական քիմիա

Կուրտիկյան Տիգրան Ստեփանի՝ ք.գ.դ.
Թավադյան Լևոն Աղասիի՝ ք.գ.դ.

Ֆիզիկական և անօրգանական քիմիա

Խառատյան Սուրեն Լևոնի՝ ֆ.մ.գ.դ.

Օրգանական քիմիա

Թոփուզյան Վիգեն Օնիկի՝ ք.գ.դ.
Ենգոյան Ալեքսանդր Փայլակի՝ ք.գ.դ.
Ղոչիկյան Տարիել Վլադիմիրի՝ ք.գ.դ.
Դանագուլյան Գևորգ Հրաչի՝ ք.գ.դ.
Հովակիմյան Մաղլենա Ժիրայրի՝ ք.գ.դ.
Հասրաթյան Գագիկ Վաչեի՝ ք.գ.դ.

Երկրաբանություն

Կարախանյան Արկադի Ստեփանի՝ երկրահանքաբանական գիտ.դոկտոր
Գևորգյան Ռուդոլֆ Գրիգորի՝ երկրահանքաբանական գիտ.դոկտոր

Մոլեկուլային կենսաբանություն

Դավթյան Տիգրան Կամոյի՝ կենսաբանական գիտ.դոկտոր (կ.գ.դ.)
Բոյաջյան Աննա Սուրենի՝ կ.գ.դ.
Փեփոյան Աստղիկ Զավենի՝ կ.գ.դ.

Մոլեկուլային կենսաբանություն, կենսաֆիզիկա

Հարությունյան Սամվել Գառնիկի՝ ֆ.մ.գ.դ.
Գաբրիելյան Աննա Գուրգենի՝ կ.գ.դ.

Գիտություն շրջակա միջավայրի մասին

Սաղաթելյան Արմեն Կառլենի՝ երկրահանքաբանական գիտ.դոկտոր
Գրիգորյան Կառլեն Վաղարշակի՝ կ.գ.դ.
Գաբրիելյան Բարդուխ Կառլենի՝ կ.գ.դ.
Փիրումյան Գևորգ Պետրոսի՝ տեխն.գ.դ.

Կենսաքիմիա

Գևորգյան Գևորգ Արտաշեսի՝ կ.գ.դ.
Քամալյան Ռոմիկ Գուրգենի՝ կ.գ.դ.
Ղազարյան Պետրոս Արամի՝ կ.գ.դ.
Վարդապետյան Հրաչիկ Ռաֆայելի՝ կ.գ.դ.

Բուսաբանություն

Վարդանյան Ժիրայր Հմայակի՝ կ.գ.դ.

Պատմություն

Խառատյան Ալբերտ Արմենակի՝ պ.գ.դ.
Գրիգորյան Գրիգոր Մեսրոպի՝ պ.գ.դ.
Զոհրաբյան Էդիկ Արտեմի՝ պ.գ.դ.
Մինասյան Էդիկ Գարեգինի՝ պ.գ.դ.
Կիրակոսյան Արման Զոնի՝ պ.գ.դ.

Արևելագիտություն

Բայբուրդյան Վահան Առաքելի՝ պ.գ.դ.
Սաֆրաստյան Ռուբեն Արամի՝ պ.գ.դ.

Լեզվաբանություն

Հովհաննիսյան Լավրենտի Շահենի՝ բանասիրական գիտ.դոկտոր (բ.գ.դ.)
Համբարձումյան Վազգեն Գուրգենի՝ բ.գ.դ.
Խաչատրյան Լալիկ Մնացականի՝ բ.գ.դ.
Խաչատրյան Գուրգեն Կիպրոնի՝ բ.գ.դ.
Հովսեփյան Լիանա Սամվելի՝ բ.գ.դ.

Գրականագիտություն

Դոլուխանյան Աելիտա Գուրգենի՝ բ.գ.դ.
Թամրազյան Հրաչյա Հրանտի՝ բ.գ.դ.
Իսահակյան Ավետիք Վիգենի՝ բ.գ.դ.
Մուրադյան Սամվել Պարգևի՝ բ.գ.դ.
Եղիազարյան Ազատ Կոմունարի՝ բ.գ.դ.

Արվեստագիտություն

Ղազարյան Վիգեն Հովհաննեսի՝ արվեստագիտության դոկտոր
Աղասյան Արարատ Վլադիմիրի՝ արվեստագիտության դոկտոր
Խաչատրյան Վանիկ Հակոբի՝ ճարտարապետության դոկտոր
Չուգասզյան Լևոն Բաբկենի՝ արվեստագիտության դոկտոր

Տնտեսագիտություն

Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի՝ տնտ.դոկտոր
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտ.դոկտոր

***

Առաջադրված թեկնածուների մասին կարծիքները մեկամսյա ժամկետում (հրապարակման օրվանից) ուղարկել ՀՀ ԳԱԱ նախագահության կադրերի բաժին, հետևյալ հասցեով՝ Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24, հեռախոս՝ 52-70-51:

Դեկտեմբերի 1-ից մինչև 27-ը ՀՀ ԳԱԱ բաժանմունքների փորձագիտական հանձնաժողովներում տեղի կունենան լսումներ և քննարկումներ, առաջադրված թեկնածուների վերաբերյալ, որին կարող են մասնակցել բաժանմունքի անդամները:

Քննարկումների ստույգ օրվա վերաբերյալ տեղեկություն կարելի է ստանալ համապատասխան բաժանմունքից հետևյալ հեռախոսահամարներով.

Մաթեմատիկայի, մեխանիկայի և ինֆորմատիկայի բաժանմունք՝ 52-96-30

Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք՝ 52-47-80

Բնական գիտությունների բաժանմունք՝ 52-58-05

Քիմիական և երկրի մասին գիտություններ բաժանմունք՝ 52-44-61

Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք՝ 52-77-22

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահություն

ՃՇՄԱՐԻՏ ԳԻՏՆԱԿԱՆՆ ՈՒ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ

Մկրտիչ Ներսիսյանի 100-ամյակին նվիրված գիտաժողով ԳԱԱ-ում

Հայաստանի գիտական հանրությունը նշում է անվանի պատմաբան, գիտության երևելի կազմակերպիչ և հասարակական գործիչ, ակադեմիկոս Մկրտիչ Գեղամի Ներսիսյանի 100-ամյակը: Այդ առթիվ նոյեմբերի 25-26-ին ՀՀ ԳԱԱ-ի նախագահության նիստերի դահլիճում մեծարկեց նրա հոբելյանին նվիրված գիտական նստաշրջան:

Ակադեմիկոս Ներսիսյանի հիմնական աշխատությունները նվիրված են հայ ժողովրդի նոր շրջանի ազգային-ազա- տագրական շարժումներին, հայ-ռուսական հարաբերություններին, ռազմաքաղաքական ու մշակութային կապերի պատմությանը, դեկաբրիստներին, նարոդնիկների գործունեությանը, Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանությանը:

Մկրտիչ Ներսիսյանը արժանացել է պետական մրցանակների, պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի, ժողովուրդների բարեկամության շքանշաններով, ՀՀ Մովսես Խորենացու մեդալով: 1961 թ. արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Գիտական նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Նա նշեց, որ Մ. Ներսիսյանը մեծ վաստակ է ունեցել ակադեմիայում, եղել ոչ միայն գիտության, այլ նաև կրթության կազմակերպիչներից:

-Նա պատմագիտության ասպարեզում մեծ ավանդ է թողել, մանավանդ՝ այնպիսի հարցերում, ինչպիսիք են թուրքագիտությունը, հայ-թուրքական հարաբերությունները: *«Ես հիշում եմ, որ շատ ծանր ժամանակաշրջանում նա խմբագրեց «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն (ռուսերեն՝ 1966թ., հայերեն՝ 1991թ.), որը լայն շրջանների համար առաջինն էր, ես մեծ հետաքրքրությամբ եմ*

կարդացել և առաջին պատկերացումը կազմել ժամանակաշրջանի մասին»,-ասաց նա:

Նա Երևանի պետական համալսարանի ռեկտոր եղավ այն շրջանում, երբ մեր բարձրագույն կրթությունը ցածր մակարդակից անցում էր կատարում դեպի ավելի բարձր մակարդակ: Հենց այդ շրջանում էր, որ մեր բարձրագույն կրթությունը հասավ իսկապես բարձրագույն մակարդակի՝ և կազմակերպչական, և բովանդակային իմաստով: Լինելով պատմության մասնագետ, նա կարողանում էր նաև հասկանալ, թե որոնք են բնագիտության այն բնագավառները, որ տվյալ ժամանակի և հետագա տարիների համար պիտի զարգացում ունենան:

Սուր և ճշմարտախոս բնավորություն ուներ, չէր կարողանում հաշտվել բացթողումների հետ, և մեր մտավորականության համար օրինակելի մարդ էր:

Այնուհետև Մկրտիչ Ներսիսյանի կյանքի և գիտական գործունեության մասին ընդարձակ զեկուցում կարդաց ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը:

«Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը հայագիտության այն սերնդի լավագույն ներկայացուցիչներից էր, որոնք աշակերտեցին հին սերնդի փայլուն համաստեղությանը՝ Հակոբ Մանանդյանին, Մանուկ Աբեղյանին, Հովսեփ Օրբելուն, Հրաչյա Աճառյանին, Ստեփան Մալխասյանին, Գրիգոր Ղափանցյանին և ուրիշների: 1930-ական թթ. ասպարեզ մտնելով, այդ սերունդը աստիճանաբար իր ուսերի վրա վերցրեց գիտության զարգացման ծանր բեռը: Նրանք կարողացան հավատարիմ մնալ իրենց ուսուցիչների ավանդներին՝ ազգային պատմության հարցերը փաստական նյութի հիման վրա ճշմարտացի լուսաբանելու սկզբունքին:

Մ. Ներսիսյանը շուրջ յոթանասուն տարի, մեծ եռանդով, անդուլ գործունեություն ծավալեց պատմագիտության, գիտակազմակերպական և ուսումնադաստիարակչական ասպարեզներում և ամենուր պատկառելի վաստակ ունեցավ»,-ասաց նա:

Գիտաժողովում լսվեցին շուրջ մեկ տասնյակ թեմատիկ զեկուցումներ, որոնք ամբողջացրին նշանավոր պատմաբանի, գիտնականի և հասարակական գործչի կերպարը:

«ՀՀ»

Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը հայագիտության այն սերնդի լավագույն ներկայացուցիչներից էր, որոնք աշակերտեցին հին սերնդի փայլուն համաստեղությանը՝ Հակոբ Մանանդյանին, Մանուկ Աբեղյանին, Հովսեփ Օրբելուն, Հրաչյա Աճառյանին, Ստեփան Մալխասյանին, Գրիգոր Ղափանցյանին և ուրիշների: 1930-ական թթ. ասպարեզ մտնելով, այդ սերունդը աստիճանաբար իր ուսերի վրա վերցրեց գիտության զարգացման ծանր բեռը: Նրանք կարողացան հավատարիմ մնալ իրենց ուսուցիչների ավանդներին՝ ազգային պատմության հարցերը փաստական նյութի հիման վրա ճշմարտացի լուսաբանելու սկզբունքին:

Ականավոր պատմաբանն ու հասարակական գործիչը

Վլադիմիր ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Մ. Գ. Ներսիսյանը շուրջ յոթանասուն տարի, մեծ եռանդով անդուլ գործունեություն ծավալեց պատմագիտության, գիտակազմակերպական և ուսումնադաստիարակչական ասպարեզներում և ամենուր պատկառելի վաստակ ունեցավ:

Հայրենական Մեծ պատերազմի հենց առաջին օրերին երիտասարդ պատմաբանը զորակոչվում է բանակ, մասնակցում Կովկասի համար մղվող մարտերին, վիրավորվում և վերադառնում Երևան: Պատերազմի վերջին տարիներին նա վարում էր Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկանի, այնուհետև՝ ՀԳԱ պատմության ինստիտուտի փոխտնօրենի (1944-1946 թթ.) պաշտոնները: 1946-1950 թթ. եղել է Կուսակցության պատմության ինստիտուտի փոխտնօրենը:

1950 թ. սկսվում է Մ. Ներսիսյանի գիտական և հասարակական առավել ծավալուն ու բեղմնավոր գործունեության շրջանը: Այդ տարում նա ընտրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ և ստանձնում հասարակական գիտությունների գծով փոխպրեզիդենտի պարտականությունները, որն անընդմեջ վարում է տաս տարի: Մի քանի տարի ԳԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի նախագահի, հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնները վարելուց հետո 1966 թ. նշանակվում է Երևանի պետական համալսարանի ռեկտոր: 1977 թ. մինչև կյանքի վերջը շարունակում է գիտական և գիտակազմակերպական աշխատանքները Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում:

Մկրտիչ Ներսիսյանին հաջողվեց գիտակազմակերպական բազում պարտականությունների կատարումը զուգակցել գիտական աշխատանքի հետ:

Մ. Ներսիսյանի գիտական ժառանգության մեջ մեծ տեղ է գրավում Արևմտյան Հայաստանի պատմությունը: 1946 թ. նա հաջողությամբ պաշտպանեց դոկտորական դիսերտացիա թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարը թեմայով: Ծանրակշիռ գիտական այդ հետազոտությունը, որը հատկանշվում էր առաջադրված հարցերի համակողմանի ու հիմնավոր քննարկմամբ, նոր ու համարձակ եզրահանգումներով, այն ժամանակվա պայմաններում չէր կարող հրապարակվել և լույս տեսավ միայն 1955 թ:

Արևմտյան Հայաստանի և առհասարակ թուրքական իրականության խոր ու բազմակողմանի վերլուծությունը մենագրության հեղինակին հանգեցրեց այն կարևոր եզրակացության, որ հայ ժողովրդի պաշտպանական, ազգային-ազատագրական պայքարը Օսմանյան կայսրությունում ստեղծված իրավիճակի, արևմտահայերի սոցիալ-տնտեսական, ազգային-դավանական հալածանքների հետևանք էր:

1960-ական թթ. կեսերին պրոֆ. Մ. Ներսիսյանը հրապարակ հանեց ինչպես գիտական, այնպես էլ լայն հասարակայնությանը հուզող, բայց լռության մատնված շատ կարևոր հիմնահարց: 1966 թ. լույս տեսավ հայերի ցեղասպանությանը՝ Մեծ Եղեռնին նվիրված փաստաթղթերի և նյութերի արժեքավոր ժողովածուն: Դրանում ընդգրկված են 1876-1917 թթ. սուլթան Աբդուլ Համիդի և երիտասարդ թուրքերի կողմից արևմտահայերի նկատմամբ կիրառած զանգվածային կոտորածների բարբարոսական քաղաքականությունը մերկացնող փաստաթղթեր: Ժողովածուն պարունակում էր բազմաթիվ նորահայտ ու թարմ արխիվային վավերագրեր մեծ պետությունների պետական պաշտոնյաների՝ արտաքին գործերի նախարարների, դեսպանների զեկուցագրեր, կոտորածների ականատես զանազան ազգությունների ներկայացուցիչների վկայություններ և այլ նյութեր:

Մ. Ներսիսյանի գիտական հետազոտությունների մյուս բնագավառը եղել է հայ-ռուսական հարաբերությունները: Մտավոր որոշ շրջանների, այդ թվում և որոշ պատմաբանների համար անհասկանալի է մնում այն պարագան, թե ինչպես արևմտահայ իրականությունն ու ազատագրական շարժումները հիմնավոր քննարկող հեղինակը միաժամանակ զբաղվում է միանգամայն այլ թեմատիկայով: Չի ընկալվում երկու այդ ուղղությունների փոխկապակցվածությունն ու ներքին տրամաբանական կապը: Հետամուտ լինելով հայ ժողովրդի նոր դարաշրջանի կենսական խնդիրներին, հեղինակը բացահայտում է մեր ժողովրդի պատմական ճակատագրում մի կողմից Թուրքիայի և մյուս կողմից Ռուսաստանի ունեցած բևեռացված դերն ու նշանակությունը:

Ներսիսյան հետազոտողին հատուկ է պատմական երևույթները վերլուծելու և ընդհանրացնելու կարողությունը, կուռ տրամաբանությունը: Նա հայ ժողովրդի իրեն զբաղեցնող հիմնահարցերը չի դիտարկում կղզիացած, ներփակ ձևով, այլ քննարկում է լայն ընդգրկումով, Հայաստանին մերձավոր և բախտակից երկրների պատմության ընդհանուր հետնախորքի վրա: Նրա աշխատություններին բնորոշ են աղբյուրագիտական հարուստ բազան, շարադրանքի պարզ ու դյուրըմբռնելի ոճը: Կարդում ես նրա աշխատություններն ու համոզվում, որ դրանք ներքին համոզումներով առաջնորդվող լայնախոհ գիտնականի ու զգաստ հայրենասերի գրչի արդյունքն են:

Ակադեմիկոս Ներսիսյանը հատուկ սեր ուներ և ընդգծված ունակությամբ էր օժտված գիտական հրատարակչության աշխատանքների կազմակերպման գործում: Եվ մեծ երախտիք ունեցավ նաև այս ասպարեզում: Նա խմբագրել է ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր» (այժմ «Լրաբեր») ամսագիրը: Երևանի համալսարանում աշխատելու տարիներին հիմնադրեց «Բանբեր Երևանի համալսարանի» և «Երևանի համալսարան» պարբերականները:

Մշտապես գիտության հոգսերով ապրող գիտնականը տեսնելով, որ «Տեղեկագիրը» սպասարկում է հասարակական բոլոր գիտություններին և հնարավորություն չունի ըստ արժանվույն զբաղվելու հայագիտության հարցերով՝ 1958 թ. հիմնադրեց «Պատմա-բանասիրական հանդեսը»: Հենց սկզբից ամսագրին այնպիսի ուղղություն տրվեց, որ դարձավ հայագիտական ծանրակշիռ գիտական օրգան և համընդհանուր ճանաչում ձեռք բերեց մեր երկրում և արտասահմանում: «Հանդեսի» ասպարեզ իջնելու ժամանակ նշանավոր արևելագետ Վ. Մինորսկին (Անգլիա) գրում էր. «Շնորհակալ եմ ինձ ուղարկված հանդեսի համար, որի խմբագրությանը ջերմորեն շնորհավորում եմ: Նա իսկույն գտավ իր ճանապարհը»:

Մ. Գ. Ներսիսյանն անուրանալի վաստակ ունի նաև մանկավարժության մարզում: Տակավին երիտասարդ հասակում, ուսանողական սեղանը թողնելու տարվանից (1931 թ.) գիտահետազոտական գործունեությանը զուգահեռ կատարում էր մանկավարժական ակտիվ աշխատանք: Նա հայ և ԽՍՀՄ ժողովուրդների պատմության դասընթաց էր կարդում Երևանի բանֆակում, ապա կոմհամալսարանում, հայկական և ռուսական մանկավարժական ինստիտուտներում: Այդուհանդերձ նրա դասախոսական, ուսումնադաստիարակչական աշխատանքները հետևողականորեն ծավալվեցին Երևանի պետական համալսարանում: Այնտեղ 1930-ական թթ. դասախոսում էր, կարճ ժամանակ եղավ պատմության ֆակուլտետի դեկան (1943-1944 թթ.), երկար տարիներ գլխավորեց հայ ժողովրդի պատմության ամբիոնը:

Նա ուսումնադաստիարակչական աշխատանքներն ավելի մեծ չափա- ➤3

Ականավոր պատմաբան ու...

➢2 նիշներով շարունակեց համալսարանի ռեկտոր աշխատելու տասնմեկ տարիների ընթացքում (1966-1977թթ.): Իր նախաձեռնությամբ համալսարանում հիմնվեցին արևելագիտության ֆակուլտետ, հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիա, իսկ գիտությունների ակադեմիայում արևելագիտության սեկտոր, որի առաջին ղեկավարն ինքն էր: Նա ղեկավարել, ուղղություն է տվել երիտասարդների աշխատանքներին, պատրաստել երկու տասնյակից ավելի գիտության թեկնածուներ, դոկտորներ:

Մ. Ներսիսյանը առաջինը ձեռնարկեց հայ ժողովրդի պատմության ամբողջական դասընթաց ստեղծելու գործը: Պատերազմի տարիների դժվարին պայմաններում այդ նախաձեռնությունը իր ավարտին չհասավ, հրատարակվեց միայն առաջին մասը: Սակայն մի քանի տարի անց նա ակտիվ մասնակցություն բերեց ՀԳԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակած դպրոցական դասագրքի ստեղծմանը: Նրա նախաձեռնությամբ ու խմբագրությամբ մեկ գրքով հրատարակվեց հայ ժողովրդի հնագույն շրջանից մինչև մեր օրերն ընդգրկող պատմությունը: Գործուն մասնակցություն ունեցավ մեր ժողովրդի պատմության գիտակա-ակադեմիական ութհատորյակի և հայկական հանրագիտարանի ստեղծման աշխատանքներին:

Ականավոր պատմաբանը միաժամանակ ակտիվ հասարակական գործիչ էր: Սխալ կլիներ այդ երևույթը բացատրել միայն շատ երիտասարդ տարիքից գիտակազմակերպչական, ուսումնադաստիարակչական բազմաթիվ պաշտոններ վարելու հանգամանքով: Այն գալիս էր կյանքին ակտիվ մասնակցելու, նրա վրա ներազդելու նրա մարդկային խառնվածքից, բնավորությունից: Անմիջական և բուռն վերաբերմունք էր դրսևորում հասունացած խնդիրների նկատմամբ և լավատեսորեն ձգտում կարգավորել, ելք գտնել: Երբեք չէր թաքցնում կամ լռում ու իր մեջ մեռցնում սեփական կարծիքը, այլ, ոգեշնչված թե զայրույթով, մշտապես արտահայտում էր:

Մ. Ներսիսյանի պատմագիտական հետաքրքրությունները, ինչպես վերը շարադրվածից պարզ դարձավ, առնչվում էին այնպիսի հիմնահարցերի հետ, որոնք ուղղակի կապվում էին հայ ժողովրդի պատմական ճակատագրին, արդի ժամանակաշրջանում նրա առաջ ծառացած խնդիրներին: Ասել է թե նա իր գիտական հետազոտությունների արդյունքներով անմիջականորեն արձագանքում էր կյանքի առաջադրած պահանջներին: Ասվածը առարկայական դարձնելու նպատակով հիշատակենք միայն մեկ փաստ: 1991-1992 թթ. ԽՍՀՄ-ի և խորհրդային կարգերի փլուզման ժամանակ տիրապետող ռռնատիրության դեմ ծավալված հզոր շարժումը մեզանում աստիճանաբար վերափոխվում, ընդունում էր նաև հակառուսական բնույթ: Պատմական տարբեր փուլերում երկու ժողովուրդների փոխհարաբերությունները, Հայաստանի համար դրա նշանակությունը լավ պատկերացնող բազմափորձ գիտնականը առաջինն ընդդիմացավ վտանգավոր այդ մտայնությանը: Նրա նախաձեռնությամբ հրավիրվեց ՀԳԱԱ ընդհանուր ժողով: Ներսիսյանի գործուն մասնակցությամբ ՀԳԱԱ-ն դատապարտեց պատմական իրականությունից կտրված, հիմնազուրկ այդ մտայնությունը և հանդես եկավ հայ հասարակայնությանն ուղղված հատուկ հայտարարությամբ: Կյանքի պահանջով և պատմական դասերի հաշվառումով կարճ ժամանակում հակառուսական հախուռն այդ մոտեցումները վերացան:

Տասնամյակներ շարունակ Մ. Ներսիսյանի հետ աշխատանքային շփումների մեջ եղած, աշխարհահռչակ գիտնական, ՀԳԱԱ շուրջ կեսդարյա պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանը գիտնականի ծննդյան 85-ամյակի առիթով հետևյալ կերպ է բնութագրել նրան. «Կյանքի այն դժվար պահերին, երբ շատ կարևոր է չմոռանալ ճշմարտությունը, այլ ավելի բարձրաձայն արտասանել այն, Դուք ցույց եք տվել ազնվագույն վերաբերմունք, և մենք բոլորս, ով գիտի այդ Ձեր սերը դեպի ճշմարտությունը և Ձեր համարձակությունը, այսօր բերում ենք Ձեր անունը որպես հասարակական գործչի և պատմաբանի օրինակ»:

Հայաստանի անկախությունից հետո, չնայած առաջացած տարիքին, նույն եռանդով Մ. Ներսիսյանը շարունակում էր ստեղծագործել, մասնակցել հանրապետության գիտական, հասարակական կյանքին: Նա հանդես էր գալիս գիտության վերափոխիչ նշանակությունը թերագնահատողների, չափանիշներ չճանաչող մամուլի ծայրահեղությունների, պատմագիտության մեջ նկատվող սիրողական վերաբերմունքի դեմ:

Գիտնականի վաստակը բարձր գնահատվեց նաև Հայաստանի Հանրապետության կողմից: Հայաստանի գիտնականների մեջ Մ. Ներսիսյանն առաջինը արժանացավ բարձր գնահատականի: Նա «Հայ պատմագիտության զարգացման ասպարեզում ունեցած նշանակալի ավանդի, Հայաստանում գիտության և բարձրագույն կրթության կազմակերպման գործում ակնառու ներդրումների համար» 1995 թ. նոյեմբերին պարգևատրվեց Մովսես Խորենացու մեդալով: Հատկանշական է, որ «Հայաստանի Հանրապետություն» թերթի նույն համարում (1999 թ. հունվարի 30) տպագրվեց Մ. Գ. Ներսիսյանի մահախոսականը, և միաժամանակ նրա ընդամենը մի քանի ամիս առաջ լույս տեսած գրախոսականը «Պատմության կեղծարարները» գրքի վերաբերյալ:

Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը թողել է գիտական այնպիսի ծանրակշիռ ժառանգություն, որ նրա անունը ընդմիշտ կմնա հայ պատմագիտության երախտավորների շարքում:

ՀԱՄԱԼԱՀՈՍՀՈՍԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԳՐՈՀԸ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՎՐԱ

(Սկիզբը՝ № № 9-11 համարներում)

«(3). Այլ ի վերջն մնա անձայն. զոր օրինակ՝ գայ, տայ, արքայ, գոյ, երեկոյ ևն: Բաց ի քանի մի բառից. յորոց ի վերջն հնչէ որպէս է թերատ. զոր օրինակ, վայ, հայ, ըստ ոմանց նաև՝ բայ, մակբայ, խոյ»: Բայց ի՞նչ անհրաժեշտության կամ պարտադրանքի թելադրանքով էր, որ բառավերջի ա և ո ձայնավորների «քթներից» պիտի կախեին մի անձայն (չարտասանվող) յ: Դարձյալ հունարենի ստրկամիտ հետևողությամբ: Հունարենում այդ ձայնավորներով վերջավորվող բառ չկար: Իսկ Ինչո՞ւ յ-ն պետք է լիներ այդ տառը: Որովհետև «յորոց ի վերջն հնչէ որպէս է, թերատ»: Յ-ին է հնչում վերագրելով՝ ստեղծեցին եա «երկբարբառ», յ-ն է թերատ համարելով՝ մտցրին բառագրության մեջ:

Օրինականության ուժ ստացած այդ հակալեզվական արհեստականության կողքով անցնելը մասնակիորեն հնարավոր դարձավ 12-րդ դարում գրության և խոսակցական լեզվի աճող տարբերությունների հարկադրանքով, որի արդյունքում բառերի որոշ խմբեր ազատագրվեցին այդ արհեստականությունից: 12-րդ դարում Արիստակեսը քննության առարկա դարձրեց բառավերջի անձայն (չլսվող) յ-ի ուղղագրության հարցը և կարողացավ բառերի չորս խումբ բեռնաթափել արհեստական պարտադրանքից: Այդ խմբերն են՝ 1. բայի հրամայականի ձևերը, ինչպես՝ աղա, մնա, շարժեա, վազեա: 2. Անձնանունները՝ Եղիա, Հուդա, Մադաթիա: 3. Աշխարհագրական անունները՝ Կիլիկիա, Ադանա: 4. Ցուցական դերանունները՝ սա, դա նա... ինչպես նաև մի շարք այլ բառեր՝ ապա, ահա, այո և այլն: Երևի միայն այդքանն էր հնարավոր, որովհետև եկեղեցու կողմից սրբագործված ու հետևողականորեն հսկողության ենթարկվող ուղղագրության արմատական ժխտումը կգնահատվեր որպես աններելի աղանդավորություն:

Ահա թե ինչու տարբեր ժամանակներում շատ զգուշավոր ու կաթիլ-կաթիլ էին կարողանում ազատագրվել հունաբանների մտցրած արհեստականություններից: Արիստակեսից հետո Գևորգ Սկևռացին իր «Արուեստ գրադարձիցն» աշխատության մեջ, որը հայոց լեզվի վանկի ու տողադարձի կանոններն է ամփոփում և գործում է այսօր էլ, կարողացավ հունաբանների սահմանած 8 ձայնավորների փոխարեն ընդունել 7 ձայնավոր՝ դուրս թողնելով հունաբանների մտցրած աւ (ով)-ը, որը համարում էին ո-ի երկարը: Իսկ Վարդան Արևելցին էլ 13-րդ դարում մերժեց երկակի թվի գաղափարը մեր լեզվում՝ գրելով. «Յայտնի է, զի յոլով անգամ ասած է, որ երկուորական կարկատէ եւ բռնադատութիւն է յիմաստնաց, զի չկա ի մերում լեզուի»: Եվ այսպես, կաթիլ առ կաթիլ, բաց հետևողականորեն մեր լեզուն մերժեց հունաբան դպրոցի մտցրած արհեստականությունները և հասավ ժամանակակից բյուրեղացման:

Ամփոփելու համար Հ և Յ գրերի «կռվի» արդյունքները՝ արձանագրենք, որ Հայկազյան բառարանում բառասկզբում հ-ով սկսվող 140 էջ զբաղեցնող բառերը և նույն բառարանում յ-ով սկսվող 70- էջանոց բառերը ոչ միայն նույնահնչյուն են այսօր, այլև նույնահնչյուն են եղել ի սկզբանե և սկսվել ու սկսվում են հ ձայնով: Այսօր նման բառերում հ ձայնը տիրացել է իր պատմական իրավունքին: Իսկ թե ինչո՞ւ հ-ի փոխարեն, ինչպես վկայում են, 140 բառում գրեցին յ, հարցի պատասխանը մնում է հետագա ուսումնասիրողներին, որոնք պետք է պարզեն, թե յ բաղաձայնը ե և ի ձայնավորներ դարձնելուց հետո այստե՞ղ ինչ խաղ խաղացին նրա գլխին: Ինչ մնում է պնդմանը, թե բառավերջում չհնչող, բայց գրվող յ-ն, բառերի փոխակերպումներում հնչվում և գրվում է, «այլապես ինչպե՞ս բացատրել աշակերտին, թէ «ընծայե»լ բառի մեջ որտեղից է յայտնուել յ-ն», նման պնդումը անգիտությունից ավելի դառնում է երեսպաշտության ճուտ՝ առանց փետուրների, տկլոր վիճակում: «Ընծայել» բառում չի յայտնուել յ-ն, այլ հայտնվել է՝ հայոց լեզվում բացառություն չունեցող օրենքի պարտադրանքով: Նորից ենք կրկնում, որ հայոց լեզուն չի ընդունում կից ձայնավորների համատեղ արտաբերում, նման դեպքերում անպայմանորեն կից ձայնավորների արանքում հանդես է գալիս մի յ, վ, որոշ օտար բառերում նաև հ բաղաձայն, և ապահովում բառի բնականոն հնչումը: Հայոց լեզուն իր այդ օրենքը պարտադրում է նաև օտարազգի այն բառերին, որոնք իրենց մայրենի լեզվի օրենքով կարող են երկու ձայնավոր միատեղ հնչել: Օտարազգի նման բառերի կից ձայնավորներից ոչ վանկարարի, այսինքն՝ թույլի «գլխին խփելով»՝ մեր լեզվի օրենքը նրան դարձնում է բաղաձայն, ինչպես՝ Ուաշինգտոն-Վաշինգտոն, Իտալիա-Իտալյա: Այդ օրենքի զորությամբ մեր լեզուն իր արհեստականորեն ու-ի փոխած վ-երն է վերականգնում, ինչպես՝ հայտնուել-հայտնվել, միաժամանակ կից ձայնավորի արանք է մտցնում յ կամ վ և ապահովում բառի կանոնավոր արտասանությունը, ինչպես՝ հավասար, գովական, հոյակապ, ծառայամիտ և այլն:

Այսպիսով՝ ամփոփելով շահարկման առարկա դարձած տառերի շուրջը բարձրացրած աղմուկի մասին մեր ասելիքը՝ մի կրկին անգամ արձանագրում ենք, թե իրականում ինչ է տեղի ունեցել:

1. Օ հնչյունի համար Մաշտոցը ստեղծել է ո տառը, որը բառի բոլոր դիրքերում միակերպ էր հնչում: Հետագայում բառասկզբի ո-երի մեծ մասը վերափոխվեց վօ երկհնչյունի, իսկ մի մասը, Աբեղյանի հաշվարկով՝ 25 բառ, մնաց նախկին հնչմամբ: Հունաբան դպրոցի լեզվագետները, հետևելով հունարենի օրենքներին, հայոց լեզվի ձայնավորներն էլ դասակարգեցին ըստ արտասանական տևողության, երկար արտասանվող ձայնավոր համարեցին է-ն, աւ և ով երկտառերն էլ համարեցին ո հնչյունի երկար արտասանվողը: Վերջինը՝ ով-ը, գործածվում էր անունների մեջ, ինչպես՝ Թովմաս, Հռովմ: Կատարած նորամուծությունը այնքան արհեստական, բռնագբոսիկ ու անհասկանալի էր, որ գրավոր խոսքում ստեղծեց խառնագրության մի կատարյալ քաոս: Միևնույն բառը միևնույն տեքստում գրվում էր, ասենք, կարաւղ, մի քանի էջ հետո՝ կարող, կամ Հովսեփ-Հաւսեփ: Պարտադրված նորամուծությունը անհասկանալի է եղել ոչ միայն մատյանները գրող գրիչներին ու «անգրագետներին», այլև Գրիգոր Մագիստրոսի նման լեզվագետին, որը բողոքել է այդ արհեստականության դեմ: Իսկ երբ լեզուն աղավաղումներից փրկելու մտահոգությամբ մտցրին հունարենի օ տառը, օ գրեցին նաև բոլոր այն բառերում, որտեղ աւ-երը սովորական ավ տառակապակցություններ էին, ինչպես՝ Պողոս, օգոստոս և այլն: Որ աւ-ը մտցրել են որպես ո-ի երկար հնչում, հաստատվում է օ-ի մտցնելուց առաջ գրավոր խոսքում արձանագրված փոխատեղումներով, ինչպես՝ կարաւղ-կարող, և հաստատում, որ մաշտոցյան ո տառը հնչական փոփոխության չի ենթարկվել բառամիջում ու բառավերջում: Հետևապես ճիշտ է վարվել Գուրգեն Սևակը՝ օ գրին վերապահելով բառասկիզբը և օ-ով սկսվող բառերի՝ բառի երկրորդ բաղադրիչ դառնալու դեպքերը: Դրանով փակվեց այդ տառի բերած դարավոր խառնագրության ճանապարհը:

2. Ե-է տառերը ժամանակին ունեցել են հնչական որոշակի տարբերություն, որը պահպանվել է ժամանակակից հայերենի բառասկզբում, ուր ե-երը վերածվել են յե երկհնչյունի: Միայն սակավաթիվ բառերում են մնացել է հնչման: Իսկ բառամիջում ու բառավերջում նրանց արտասանությունն այն աստիճանի է նույնացվել, միայն ստուգաբանական վերլուծությամբ կարելի է որոշել նրանց երբեմնի տարբերությունը, ինչպես՝ գետ-գէտ (գիտենալ): Հունաբանները է-ին վերագրեցին երկար հնչվելու արհեստական հատկություն, և այդ արհեստական օրենքի պարտադրանքով անհարկի էագրություններով լցրին մեր գրավոր խոսքը: 1940 թվականի ուղղագրական մասնակի բարեփոխությամբ ճիշտ լուծում ստացավ նաև այդ հարցը:

(Շարունակելի)

Արտաշես ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Էներգետիկայի զարգացման ծրագիրը՝ խնայողության գրավական

Վառելիքաէներգետիկ պաշարների արդյունավետ օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության տեսակետից կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության էներգետիկայի զարգացման ծրագրի մշակումը և փուլ առ փուլ իրականացումը: Ծրագրում անհրաժեշտ է հաշվի առնել համաշխարհային փորձը, ինչպես նաև մեր հանրապետության առանձնահատկությունները: Անհրաժեշտ է բոլոր բնակավայրերի համար որոշել էլեկտրա, ջերմա և վառելիքամատակարարման համակարգերի լավագույն լուծումներ, որոնց արդյունքում կտնտեսվի վառելիք: Մեծ տեղ պետք է հատկացնել էլեկտրական և ջերմային էներգիաների համակցված ցիկլով գազատուրբինային և հակաճնշումային տուրբինների օգտագործմանը: Չպետք է մոռանանք, որ ՀՀ-ն աղքատ է վառելիքաէներգետիկ պաշարներով, այն բերում ենք դրսից՝ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ: Հետևաբար, էներգետիկական ծրագրում հարկ է ներառել նաև օրենսդրական մի շարք դրույթներ, որոնք՝ անտարակույս, կխթանեն էներգախնայողության հստակ և ճկուն ծրագրի իրականացմանը: Այս հարցում հապաղելու իրավունք չունենք, քանի որ էներգետիկայի հարցերը՝ օրինակ շենքերի ջեռուցումը, իրականացվում է «ով ինչպես կարող է» սկզբունքով:

Առավել ուշադիր և զգույշ մոտեցում պետք է հանդես բերել սահմանամերձ բնակավայրերի էներգամատակարարման հարցին: Տարերային աղետների, ոտնձգությունների և այլնի պարագայում անհրաժեշտ է ունենալ այնպիսի էներգետիկական համակարգեր, որոնք կարողանան ապահովել նվազագույն պահանջները: Այս տեսակետից ավելի է կարևորվում հայկական ատոմակայանի հարակից տարածքում գազատուրբինային կայանքի նախագծումը և կառուցումը: Այն հնարավորություն կտա լուծելու տարաբնույթ հարցեր:

Հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել վերականգնվող էներգիայի աղբյուրների (գետերի, արեգակի, քամու և այլն էներգիաների) առավել արդյունավետ օգտագործման խնդրին: Ներկայումս ՀՀ-ում ունենք աշխատող 95 փոքր հիդրոէլեկտրակայան, որոնց գումարային հզորությունը կազմում է 124 ՄՎտ, և կարող ենք արտադրել տարեկան 387 միլիոն կՎտ.ժ էլեկտրական էներգիա: Առաջիկայում կկառուցվեն ևս 66 փոքր ՀԷԿ-եր: Արդյունքում կունենանք 161 ՀԷԿ՝ 262 ՄՎտ ընդհանուր հզորությամբ:

ՀՀ-ում ունենք մասնագետների և գիտնականների հզոր ներուժ և կարող ենք կարճ ժամանակահատվածում իրականացնել հիշյալ խնդիրների լուծումը:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Հայկական էներգետիկական ակադեմիայի նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու

Հորինված պատմությունն ու իրական փաստերը

Ինչպես փոխանցում է Panorama.am-ը՝ լույս է տեսել Լոնդոնում Հայաստանի նախկին պատվո հյուպատոս, Armenian institute կազմակերպության հոգաբարձու, քարտեզագետ, Հայաստանի հնագույն քարտեզների վերաբերյալ երեք աշխատությունների հեղինակ, ՀՀ ԳԱԱ պատվո դոկտոր Ռուբեն Գալչյանի «Հորինված պատմություն. Ադրբեջան և Հայաստան, կեղծիքներ ու փաստեր» գրքի ռուսերեն տարբերակը: Գրքի անգլերեն տարբերակը լույս է տեսել 2009-ին: Այստեղ հղում է կատարված 130 գիտական աղբյուրների և փաստերի: Այն գրված է որպես պատասխան անցյալ 50 տարիների ադրբեջանական գիտական հրատարակություններում առկա հակահայ հերյուրանքների ու կեղծիքների, որոնք վերջին տարիների ընթացքում նավթային եկամտից ստացված ներդրումներով արդեն հասել են ահռելի չափերի ու չափազանցությունների: Ներկայացվում է «Ադրբեջանի Հանրապետություն» կոչվող երկրի ծնունդը 1918-ին, բերված են պատմական փաստեր, թե որն է Ադրբեջանը, որը՝ Աղվանքը, և ինչ է նրանց կապը:

Ի հակակշիռ ադրբեջանական այն փաստերի, թե իբր հայերը Կովկասի տարածքում եկվորներ են, իսկ ադրբեջանցիները՝ բնիկներ, բերված են բազմաթիվ պատմիչների ու ճանապարհորդների փաստեր, վկայություններ, ինչպես նաև մեջբերումներ 18-19-րդ դարերի տեղաբնակ թուրք-թաթար պատմիչների ու պատմաբանների գրքերից, որոնց արդի ռուսերեն և ադրբեջաներեն թարգմանություններից հանված են «հայ» և «Հայաստան» անվանումները և երբեմն էլ նույնիսկ դրանց մասին նյութեր պարունակող գլուխները: Անդրադարձ է կատարվում նաև ադրբեջանական այն գրքին, ուր Հայաստանի քարտեզի տակ գրված է «Արևմտյան Ադրբեջան», և Հայաստանի բոլոր պատմական հուշարձաններն ու եկեղեցիները ներկայացվում են որպես «ուրարտա-թյուրքական, աղվանա-թյուրքական, քրիստոնեա-թյուրքական»: Ավելի քան մեկ տարի առաջ Ռ. Գալչյանը, դիմելով ՀՀ իշխանություններին, զարմանք էր հայտնել, թե ինչու մեր երկիրը Ադրբեջանի դեմ հայցով չի դիմում միջազգային դատարան, որովհետև վերջին 20 տարում՝ անկախությունից հետո, Ադրբեջանի կառավարությունը «Հեյդար Ալիևի հիմնադրամի» օժանդակությամբ միլիոններ է ծախսում հակահայ պրոպագանդան և կեղծիքները տարածելու համար:



«Սա միջազգային օրենքի տեսանկյունից կեղծիք է, սրա դեմը պետք է առնել: Եթե հակառակը չխոսենք, 20, 40, 60 տարի հետո, ով հետաքրքրված լինի պատմությամբ և գրադարաններին դիմի, միայն կեղծիքներով լի ադրբեջանական գրականություն կգտնի, հետևաբար նրանց ստերը կդառնան փաստեր»,- իրավացիորեն նկատում է Ռուբեն Գալչյանը:

ԱՅԼՈՒՆՔ

Ծխող կանանց զավակների մեջ հանցագործները 1/3-ով շատ են

Հղիության ժամանակ ծխող կանայք մեծ հավանականությամբ կարող են ծնել հանցավոր հակումներով զավակներ,- եզրակացրել են Հարվարդի (ԱՍՆ) գիտնականները: Նրանց հետազոտության արդյունքները հրապարակված են բրիտանական մամուլում:



Հարվարդի Հանրային առողջության դպրոցի գիտնականների տվյալներով, ծխող կանանց զավակների շրջանում հակահասարակական վարքագծի և քրեական հակումների հավանականությունը 31 տոկոսով ավելի է մյուս կանանց զավակների համեմատությամբ: Խոսքը հղիության ժամանակ օրական 20 և ավելի գլանակ ծխողների մասին է: Հետազոտության արդյունքները հիմնված են 1959-1966 թթ. 3700 կանանց հարցումներից ստացված տվյալների, ինչպես նաև 30 տարի անց նրանց զավակների վերաբերյալ հավաքված տեղեկությունների վրա:

Պարզվել է, որ հղիության ժամանակ ծխած կանանց զավակների մեջ քրեական հանցագործները շատ են չծխողների զավակների համեմատությամբ: Արդյունքները միատեսակ են՝ անկախ ծնված երեխայի սեռից:

Յորքի համալսարանի պրոֆեսոր Քեյթ Պիկետը կարծում է, որ ամերիկացի գիտնականների տվյալները միանգամայն անաչառ և համոզիչ են: Քրեական հետքը նկատվում է հավասարապես՝ անկախ հարցման ենթարկված ընտանիքների սոցիալական դրությունից կամ ֆինանսական բարօրությունից:

Նարնջի հյութը մեծացնում է հոդատապի վտանգը

Բոստոնի համալսարանի գիտնականները եզրակացրել են, որ օրական երկու բաժակ նարնջի հյութ խմելը կանանց շրջանում 2,4 անգամ մեծացնում է հոդատապով հիվանդանալու վտանգը: Գիտնականները ուսումնասիրել են 22-ից բարձր տարիքի 80 հազար կանանց սննդային սովորությունները:

«Դեյլի մեյլ» թերթը գրում է, որ օրական 1 բաժակ նարնջի հյութ խմելը հոդատապի վտանգը մեծացնում է 41 տոկոսով:

Փորձագետները տվյալ հիվանդությունը կապում են հյութի և անալկոհոլ ըմպելիքների մեջ ֆրուկտոզայի պարունակության բարձր մակարդակի հետ: Դա հանգեցնում է հոդերում միզաթթվի կուտակմանը և հիվանդագին այտուցների գոյացմանը: Հոդատապը հաճախ կապված է նաև շատ ալկոհոլ կամ կարմիր գինի ներառող սննդակարգի հետ:

Հոդաբորբի տարատեսակ հոդատապից տառապում է բրիտանացիների 1,5 տոկոսը: Վերջին 20 տարում հիվանդ կանանց թիվը կրկնապատկվել է: Անցյալ տարի պարզվեց, որ հոդատապով հիվանդ է 60-69 տարեկան կանանց 3,5 տոկոսը, 70-79 տարեկանների 4,6 և 80-ից բարձր տարիքի կանանց 5,6 տոկոսը:

Վախճանվել է բանկոմատի ստեղծողը

Շոտլանդիայում 84 տարեկան հասակում վախճանվել է գյուտարար Ջոն Շեպարդ-Բարրոնը, որը միջազգային համբավ ձեռք բերեց՝ հայտնագործելով բանկոմատը:

Շեպարդ Բարրոնը աշխատում էր բրիտանական հանրահայտ De La Rue ընկերությունում, որը աշխարհի արժեթղթերի խոշորագույն արտադրողներից մեկն էր: 60-ականների կեսերին Շեպարդ-Բարրոնը մշակեց մի սարք, որն ընդունակ էր օրվա ցանկացած ժամին տալ թղթադրամներ:

Ինչպես ասում էր գյուտարարը, այդ գաղափարը ծնվեց, երբ նա մի անգամ ուշացած եկավ բանկ և մնաց առանց փողի: Լոնդոնի հյուսիսում 1967 թվականի հունիսի 27-ին Barclays բանկի մասնաճյուղում հայտնվեց շուրջօրյա աշխատող առաջին բանկոմատը:

Այդ բանկոմատի աշխատելու սկզբունքը որոշ չափով տարբերվում էր այսօրվա բանկոմատներից: Այն ժամանակ դրանցից փող հանելու համար օգտագործում էին անվանական վաուչերները, որոնք պետք էր նախապես ստանալ բանկից: Հետագայում մեկ ուրիշ շոտլանդացի՝ Ջիմ Գուդֆելլուն կատարելագործեց Շեպարդ Բարրոնի սարքը՝ մշակելով ինքնությունը հաստատող կոդը, որը հաշիվը պաշտպանում էր անթույլատրելի ոտնձգություններից: Որոշ ժամանակ անց բանկոմատի գործողության համակարգը ընդունեց ժամանակակից տեսքը, երբ Միացյալ Նահանգներում սկսեցին օգտագործվել առաջին պլաստիկ քարտերը:

Ակադեմիական նոր հրապարակություններ

1. Հեղ.կոլեկտիվ – Հայ տնտեսագետներ (գիտակենսագրական ուրվագծեր):
2. Հեղ.կոլեկտիվ – Շիրակի հայագիտական կենտրոնի գիտական աշխատություններ, պր.XII :
3. Кол. авторов - „Лазерная физика -2009„
4. Н. Тоноян, Р. Авакян – Доведение до самоубийства как состав деяния
5. Ա. Հասրաթյան - Արուճի վաղ միջնադարյան համալիրը:
6. Հեղ.կոլեկտիվ – «Տիեզերական մարմինների էվոլյուցիան նրանց ֆիզիկական ակտիվության միջոցով (Վիկտոր Համբարձումյանի 100 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր):
7. Ս. Հարությունյան - Բանագիտական ակնարկներ :
8. Հեղ.կոլեկտիվ –Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում:
9. Ա. Սարգսյան – Պարույր Սևակը և ժողովրդական բանահյուսությունը:

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 30.11.2010 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА